

ք. Երևան

«22» 09 2022 թ.

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եղվարդշին» ԲԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արտաշատի մայր ջրանցքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է մինչև սույն Պայմանագրով կողմերի միջև ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 50 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 159105125 (մեկ հարյուր հիսունինը միլիոն հարյուր հինգ հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, որից 26517521 (քսանվեց միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 39776000 (երեսունինը միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է [33](#) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՀՀ ՏԿԵՆ ԶԿ «Զրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/6
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621

«Եղվարդշին» ԲԲԸ
Երևան, Հրաչյա Քոչար 14
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004675878, ՀՎՀՀ՝ 03300225

Տնօրեն

Գլխավոր տնօրեն

/ստորագրություն/ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ

/ստորագրություն/ Ս. Վարդանյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը հակասող դրույթներ:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԱՐՏԱՇԱՏԻ ՄԱՅՐ ԶՐԱՆՑՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Յ/Յ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ. դրամ (թվերով)	Ընդհանուր արժեքը, հազ. դրամ (թվերով)	Ընդհանուր արժեքի %
1		2	3	4	5	6	7
		1.Արտաշատի մայր ջրանցք Պ498+65-Պ499+45					
		Հողային աշխատանքներ					
1.1	1-231	Ջրանցքի մաքրում բերվածքներից բուլդոզերով, շերտի եզրին ռետինե խցափակիչով, տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտի կից	մ ³	69.6	2.500	174.000	
1.2	1-168	Բուլդոզերով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	69.6	1.500	104.400	
1.3	1-959	Ջրանցքի մաքրում բերվածքներից ձեռքով տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտի կից (հատակի եզրերով 10սմ լայնքով)	մ ³	2.400	3.500	8.400	
1.4	1-168	Ձեռքով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	2.4	1.500	3.600	
1.5	1-236	Բնահողի կտրում բուլդոզերով IV կարգի բնահողերում, ժամանակավոր կուտակումով	մ ³	100	0.700	70.000	
1.6	1.277 տեխ. մաս 3.50, k=1.35	Մոտեցնող ճանապարհի հարթեցում բուլդոզերով	մ ²	56.0	1.000	56.000	
1.7	1-990 կիրառելի	Խոռոչների դետակրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	4.0	6.000	24.000	
1.8	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	4	1.500	6.000	
1.9	37-719, k=0.6	Գոյություն ունեցող Դ-25 տիպի հավաքովի երկաթբետոնե բլոկների ապամոնտաժ	մ ³	41.8	8.000	334.400	
1.10	сметные цены на погрузные работы п29	Ապամոնտաժված բլոկների թափոնների բարձում ինքնաթափ	տ	104.5	1.000	104.500	
1.11	46-83	Հատակի և նախապատրաստական շերտի բետոնի քանդում կուտակումով	մ ³	19.8	6.000	118.800	
1.12	1-990 կիրառելի	Դ-բլոկների շինարարական կարերի, դետակրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	0.7	8.000	5.600	
1.13	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	20.5	1.500	30.750	
1.14	միջինացված շուկայական գինը 1տ/կմ համար 100 դրամ	Բարձրված բերվածքների և բետոնի թափոնների ինքնաթափերով տեղափոխում 10կմ	տ	270.11	3.300	891.363	
1.15	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով փոստրակի ստեղծումով	մ ³	147.0	3.900	573.300	
1.16	1-969	Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի բնահողերից տոփանումով	մ ³	247	2.150	531.050	
		ԸՆԴԱՄԵՆՆԸ՝ ըստ հողային աշխատանքների				3036.163	2.277
		Բետոնային աշխատանքներ					
1.17	13-263	Գոյություն ունեցող բետոնի մակերևույթի մաքրում մետաղական խոզանակով	մ ²	489.0	1.000	489.000	

1.18	6-1	Խոռոչների փակում հատակում միաձույլ B15, F150, W6 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	4.0	78.000	312.000	
1.19	6-1	Ենթաշերտ միաձույլ B7.5, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	9.6	65.000	624.000	
1.20	PEP-88 12-2, K=0.3, կիրառելի	Դ-25 տիպի գոյություն ունեցող՝ ե/բ հավաքովի բլոկների և հատակի քայքայված դեֆորմացիոն կարերի մաքրում (թափոն 14.2մ3, 3.81մ3)	մ	59.5	1.000	59.500	
1.21	37-719	Դ-25.20-1 տիպի բլոկների մոնտաժ, ամրանի ծախսը 116կգ/մ ³ , ներառյալ N2 և N3 կարերի ստեղծումը	մ3	44.0	55.000	2420.000	
1.22	ինֆորմ	Դ-25.20-1 տիպի բլոկներ արժեք և մատակարարում	հատ	40.0	190.000	7600.000	
1.23	37-705	Դ-25.20-1 տիպի բլոկների միջև ե/բետոնե հատակի ստեղծում, B15, F150, W6, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ3	10.2	78.000	795.600	
1.24	37-727	Ամրանների տեղադրում	տ	0.6	50.000	29.720	
1.25	ինֆորմ	Փ6 AII դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.2	450.000	70.920	
1.26	ինֆորմ	Փ12 AIII դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.4	450.000	196.560	
1.27	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ	մ2	9.0	1.500	13.500	
1.28	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը / 0.2կգ/մ ² /, արժեք մատակարարում	մ2	9.0	4.500	40.500	
1.29	41-48 կիրառելի	Կար N1, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը և տեղադրումը	մ	49.0	7.000	343.000	
1.30	ինֆորմ	Կար N2- նյութածախսը, նյութերի արժեքը և մատակարարումը	մ	85.0	6.000	510.000	
1.31	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ. N2 կարերի թևիկներին b=45սմ	մ2	10.2	1.500	15.300	
1.32	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը N2 կարերի համար, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ2	10.2	4.500	45.900	
1.33	ինֆորմ	Կար N3- նյութածախսը, նյութերի արժեքը և մատակարարումը	մ	17.5	8.500	148.750	
1.34	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ. N3 կարերի թևիկներին b=45սմ	մ2	2.1	1.500	3.150	
1.35	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը N3 կարերի համար, նյութերի արժեքը և մատակարարումը	մ2	2.1	4.500	9.450	
		Կար N4-32.5մ					
1.36	15-254	Ուղղահայաց պատի մակերևույթի ֆիբրա-ցեմենտ- պոլիմերային սվաղի իրականացում 30մմ հաստ.	մ2	9.0	8.000	72.000	
1.37	6-343	Ցեմենտ-պոլիմեր շաղախի (1:2 ցեմ/ավազ հարաբերությամբ) պատրաստում շինհրապարակում սվաղի համար	մ3	0.3	15.000	4.050	
1.38	ինֆորմ	Ավազ, արժեք և մատակարարումը	մ3	0.3	6.000	1.588	
1.39	ինֆորմ	Ցեմենտ Մ400, արժեք և մատակարարումը	տ	0.1	60.000	8.424	
1.40	ինֆորմ	Ջուր, արժեք և մատակարարումը	մ3	0.1	0.500	0.047	
1.41	6-1, կիրառելի	Դ-տիպի գոյություն ունեցող բլոկների շինարարական կարերի լցում պոլիմեր-ցեմենտե շաղախով ֆիբրային մազիկներով	մ3	0.7	1.000	0.650	
1.42	6-343	Ցեմենտ-պոլիմեր շաղախի (1:2 ցեմենտ-ավազ հարաբերությամբ) պատրաստում շինհրապարակում	մ3	0.6	15.000	9.000	
1.43	ինֆորմ	Ավազ, արժեք և մատակարարումը	մ3	0.6	6.000	3.528	
1.44	ինֆորմ	Ցեմենտ Մ400, արժեք և մատակարարումը	տ	0.3	60.000	18.720	
1.45	ինֆորմ	ջուր, արժեք և մատակարարումը	մ3	0.2	0.500	0.105	
1.46	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ, արժեք մատակարարում	տ	0.03	1800.000	56.160	

1.47	"Արգել" ՓԲԸ	Բազալտե մագիկներ 5մմ, արժեք մատակարարում	տ	0.01	1800.000	11.232	
1.48	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ. կարերի թևիկներին b=45սմ	մ2	14.6	1.000	14.625	
1.49	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը, / 0.2կգ/մ2 /, արժեք մատակարարում	մ2	14.6	1.500	21.938	
1.50	41-48 կիրառելի	Գոյություն ունեցող Դ-տիպի բլոկների դեֆորմացիոն կարերի վերականգնում (Կար N5), ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	17.5	6.000	105.000	
1.51	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ. կարերի թևիկներին b=45սմ, (Կար N5), արժեք մատակարարում տեղադրում	մ2	7.9	1.000	7.875	
1.52	<<ՀԻՂՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը (Կար N5), արժեք մատակարարում	մ2	7.9	1.500	11.813	
1.53	7-321 k=0.6,k=0.5 կիրառելի	Գոյություն ունեցող պողպատե ցանկապատի ապամոնտաժ	մ	66.0	7.300	481.800	
		Ընդամենը՝ ըստ բետոնային աշխատանքերի				14555.405	10.919
		Մեկուսիչ աշխատանքներ					
1.54	8-27	Դ- տիպի ե/բ բլոկների արտաքին մակերևույթի քսուկային ջրամեկուսացում բիտումով, երկշերտ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ ²	200	1.400	280.000	
		Ընդամենը՝ ըստ մեկուսիչ աշխատանքերի				280.000	0.197
		Ընդամենը՝ ըստ բաժին 1-ի				17871.568	13.393
		2. Արտաշատի մայր ջրանցք ՊԿ221+27- ՊԿ221+79					
		Յողային աշխատանքներ					
2.1	1-231	Ջրանցքի մաքրում բերվածքներից բուլդոզերով, շերտի եզրին ռետինե խցափակիչով, տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտին կից (ջրանցքի հատակի b=8.3մ)	մ ³	63.4	2.500	158.600	
2.2	1-168	Բուլդոզերով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	63.4	1.500	95.160	
2.3	1-959	Ջրանցքի մաքրում բերվածքներից ձեռքով տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտին կից (հատակի եզրերով 10սմ լայնքով)	մ ³	1.6	3.500	5.460	
2.4	1-168	Ձեռքով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	1.6	1.500	2.340	
2.5	1-990 կիրառելի	Խոռոչների դեստրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	3.3	6.000	19.800	
2.6	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	3.3	1.500	4.950	
2.7	37-719, k=0.6	Գոյություն ունեցող Դ-25 տիպի հավաքովի երկաթբետոնե բլոկների ապամոնտաժ	մ3	28.1	8.000	224.400	
2.8	сметные цены на погрузочные работы п29	Ապամոնտաժված բլոկների թափոնների բարձում ինքնաթափ	տ	70.1	1.000	70.125	
2.9	46-83	Հատակի և մասնապատրաստական շերտի բետոնի քանդում կուտակումով	մ ³	12.7	6.000	76.200	
2.10	1-990 կիրառելի	Դ-բլոկների շինարարական կարերի, դեստրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	0.6	8.000	4.800	
2.11	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով բարձումով	մ ³	13.3	1.500	19.950	
2.12	միջինացված շուկայական գինը 1տ/կմ համար 80 դրամ	Բարձված բերվածքների և բետոնի թափոնների ինքնաթափերով տեղափոխում 10կմ	տ	206.4	3.200	660.624	

2.13	1-52	IV կարգի բնհողերի քանդում կողմից քանդված տարածք	մ ³	117.4	0.500	58.685	
2.14	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով հատակի լրամշակում	մ ³	3.6	1.500	5.445	
2.15	1-969	Յուրաքանչյուր ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերից տոփանումով	մ ³	36.3	0.500	18.150	
2.16	1-261	Յուրաքանչյուր բուլղոգերով տեղափոխումով օգտակար հանույթի բնահողերով	մ ³	84.7	0.700	59.290	
2.17	1-1185	Յուրաքանչյուր խտացում պնեմատոփչներով, Բ-տիպի բլոկների ետնամասում	մ ³	84.7	2.000	169.400	
2.18	47-95, 47-98	Ճանապարհի պրոֆիլավորում 4.0մ լայնությամբ	մ	52.0	0.500	26.000	
Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքների						1679.379	1.163
<i>Բետոնային աշխատանքներ</i>							
2.19	13-263	Գոյություն ունեցող բետոնի մակերևույթի մաքրում մետաղական խոզանակով	մ ²	432.00	1.000	432.000	
2.20	6-1	Խոռոչների փակում հատակում միաձույլ B15, F150, W6 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ ³	3.30	78.000	257.400	
2.21	6-1	Ենթաշերտ միաձույլ B7.5, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ ³	6.20	65.000	403.000	
2.22	PEP-88 12-2, K=0.3, կիրառելի	Բ-25 տիպի գոյություն ունեցող՝ ե/բ հավաքովի բլոկների և հատակի քայքայված դեֆորմացիոն կարերի մաքրում (թափոն 14.2մ ³ , 3.81մ ³)	մ	54.00	1.000	54.000	
2.23	37-719	Բ-25.20-1 տիպի բլոկների մոնտաժ, ամրանի ծախսը 116.0կգ/մ ³ , ներառյալ N2 և N3 կարերի ստեղծումը	մ ³	28.6	55.000	1573.000	
2.24	ինֆորմ	Բ-25.20-1 տիպի բլոկներ արժեք և մատակարարում	հատ	26.0	190.000	4940.000	
2.25	37-705	Բ-25.20-1 տիպի բլոկների միջև ե/բետոնե հատակի ստեղծում, B15, F150, W6, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ ³	6.50	78.000	507.000	
2.26	37-727	Ամրանների տեղադրում	տ	0.386	50.000	19.318	
2.27	ինֆորմ	Փ6 AI դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.102	450.000	46.098	
2.28	ինֆորմ	Փ12 AIII դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.284	450.000	127.764	
2.29	41-48 կիրառելի	Կար N1, արժեք մատակարարում և տեղադրում	մ	45.5	9.000	409.500	
2.30	ինֆորմ	Կար N2- նյութածախսը, արժեք մատակարարում	մ	50	6.000	300.000	
2.31	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍԴԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսում 1 շերտով, 0.2մմ հաստ. N2 կարերի թևիկներին b=45սմ	մ ²	6.0	1.500	9.000	
2.32	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍԴԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը N2 կարերի համար, / 0.2կգ/մ ² /, արժեք մատակարարում	մ ²	6.0	4.500	27.000	
2.33	ինֆորմ	Կար N3- նյութածախսը, նյութերի արժեքը և մատակարարումը	մ	12.5	8.500	106.250	
2.34	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍԴԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսում 1 շերտով, 0.2մմ հաստ. N3 կարերի թևիկներին b=45սմ	մ ²	1.5	1.500	2.250	
2.35	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍԴԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը N3 կարերի համար	մ ²	1.5	1.500	2.250	
<u>Կար N4-30մ</u>							
2.36	6-1, կիրառելի	Բ-տիպի գոյություն ունեցող բլոկների շինարարական կարերի լցում պոլիմեր-ցեմենտե շաղախով ֆիբրային մազիկներով	մ ³	0.60	95.000	57.000	
2.37	6-343	Ցեմենտ-պոլիմեր շաղախի (1:2 ցեմենտ-ավազ հարաբերությամբ) պատրաստում շինհրապարակում	մ ³	0.6	25.000	15.000	
2.38	ինֆորմ	Ավազ, արժեք և մատակարարումը	մ ³	0.6	6.000	3.528	
2.39	ինֆորմ	Ցեմենտ Ս400, արժեք և մատակարարումը	տ	0.3	60.000	18.720	
2.40	ինֆորմ	ջուր, արժեք և մատակարարումը	մ ³	0.2	0.500	0.105	
2.41	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍԴԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ, արժեք մատակարարում	տ	0.031	1800.000	56.160	
2.42	"Արգել" ՓԲԸ	Բազալտե մազիկներ 5մմ, արժեք մատակարարում	տ	0.006	1800.000	11.232	

2.43	<<ՀԻՊՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ. կարերի թևկներին b=45սմ	մ2	13.5	1.500	20.250	
2.44	<<ՀԻՊՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը, արժեք մատակարարում	մ2	13.5	1.500	20.250	
2.45	41-48 կիրառելի	Գոյություն ունեցող Դ-տիպի բլոկների դեֆորմացիոն կարերի վերականգնում (Կար N5)	մ	12.5	14.000	175.000	
2.46	<<ՀԻՊՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսուն 1 շերտով, 0.2մմ հաստ. կարերի թևկներին b=45սմ, (Կար N5)	մ2	5.6	1.500	8.438	
2.47	<<ՀԻՊՐԱՏՆԹ> > ՍՊԸ	Հիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը (Կար N5)	մ2	5.6	8.500	47.813	
		Ընդամենը՝ ըստ բետոնային աշխատանքների				9649.326	7.167
		<i>Մեկուսիչ աշխատանքներ</i>					
2.48	27-Aug	Դ- տիպի ե/բ բլոկների արտաքին մակերևույթի քուլկային ջրամեկուսացում բիտումով, երկշերտ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ ²	130	1.400	182.000	
		Ընդամենը՝ ըստ մեկուսիչ աշխատանքների				182.000	0.128
		Ընդամենը՝ ըստ բաժին 2-ի				11510.71	8.459
		<u>3. Արտաշատի մայր ջրանցք ՊԿ226+09-ՊԿ226+61</u>					
		<i>Յողային աշխատանքներ</i>					
3.1	1-231	Ջրանցքի մաքրում բերվածքներից բուլդոզերով, շերտի եզրին ռետինե խցափակիչով, տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտին կից (ջրանցքի հատակի b=8.3մ)	մ ³	58.3	2.500	145.743	
3.2	1-168	Բուլդոզերով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	58.3	1.500	87.446	
3.3	1-959	Ջրանցքի մաքրում բերվածքներից ձեռքով տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտին կից (հատակի եզրերով 10սմ լայնքով)	մ ³	1.8	3.500	6.311	
3.4	1-168	Ձեռքով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	1.8	1.500	2.705	
3.5	1-990 կիրառելի	Խոռոչների դեստրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	3.3	6.000	19.800	
3.6	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	3.3	1.500	4.950	
3.7	37-719, k=0.6	Գոյություն ունեցող Դ-25 տիպի հավաքովի երկաթբետոնե բլոկների ապամոնտաժ	մ ³	28.1	8.000	224.400	
3.8	сметные цены на погрузочные работы п29	Ապամոնտաժված բլոկների թափոնների բարձում ինքնաթափ	տ	70.1	1.000	70.125	
3.9	46-83	Հատակի և նախապատրաստական շերտի բետոնի քանդում կուտակումով	մ ³	12.7	6.000	76.200	
3.10	1-990 կիրառելի	Դ-բլոկների շինարարական կարերի, դեստրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	0.6	8.000	4.800	
3.11	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	13.3	1.500	19.950	
3.12	միջինացված շուկայական գինը 1տ/կմ համար 80 դրամ	Բարձրված բերվածքների և բետոնի թափոնների ինքնաթափերով տեղափոխում 10կմ	տ	199.1	3.400	676.923	
3.13	1-52	IV կարգի բնհողերի քանդում կողիցքով էքսկավատորով 0.65մ ³	մ ³	121.3	0.500	60.625	
3.14	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով հատակի լրամշակում	մ ³	3.8	3.900	14.625	
3.15	1-969	Հետիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերից տոփանումով	մ ³	37.5	0.800	30.000	
3.16	1-261	Հետիցք բուլդոզերով 96կտ տեղափոխումով օգտակար հանույթի բնահողերով	մ ³	87.5	0.200	17.500	

3.17	1-1185	Յետլիցքի խտացում պնեվմատոփիչներով, Դ-տիպի բլոկների ետնամասում	մ ³	87.5	0.800	70.000	
3.18	47-95, 47-98	ճանապարհի պրոֆիլավորում 4.0մ լայնությամբ	մ	76.0	0.500	38.000	
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքների				1570.103	1.169
		<i>Բետոնային աշխատանքներ</i>					
3.19	13-263	Գոյություն ունեցող բետոնի մակերևույթի մաքրում մետաղական խոզանակով	մ ²	437.00	1.000	437.000	
3.20	6-1	Խոռոչների փակում հատակում միաձույլ B15, F150, W6 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ ³	3.30	78.000	257.400	
3.21	6-1	Ենթաշերտ միաձույլ B7.5, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ ³	6.20	65.000	403.000	
3.22	PEP-88 12-2, K=0.3, կիրառելի	Դ-25 տիպի գոյություն ունեցող՝ ե/բ հավաքովի բլոկների և հատակի քայքայված դեֆորմացիոն կարերի մաքրում (թափոն 14.2մ ³ , 3.81մ ³)	մ	54.50	1.000	54.500	
3.23	37-719	Դ-25.20-1 տիպի բլոկների մոնտաժ, ամրանի ծախսը 116.0կգ/մ ³ , ներառյալ N2 և N3 կարերի ստեղծումը	մ ³	28.6	55.000	1573.000	
3.24	ինֆորմ	Դ-25.20-1 տիպի բլոկներ արժեք և մատակարարում	հատ	26.0	190.000	4940.000	
3.25	37-705	Դ-25.20-1 տիպի բլոկների միջև ե/բետոնե հատակի ստեղծում, B15, F150, W6, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ ³	6.50	78.000	507.000	
3.26	37-727	Ամրանների տեղադրում	տ	0.386	50.000	19.318	
3.27	ինֆորմ	Փ6 A1 դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.102	450.000	46.098	
3.28	ինֆորմ	Փ12 AIII դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.284	450.000	127.764	
3.29	41-48 կիրառելի	Կար N1, ներառյալ նյութերի արժեքը և մատակարարումը և տեղադրումը	մ	46.0	9.000	414.000	
3.30	ինֆորմ	Կար N2- նյութածախսը, նյութերի արժեքը և մատակարարումը	մ	50	6.000	300.000	
3.31	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսում 1 շերտով, 0.2մմ հաստ. N2 կարերի թևիկներին b=45սմ	մ ²	6.0	1.500	9.000	
3.32	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը N2 կարերի համար, / 0.2կգ/մ ² /, արժեք մատակարարում	մ ²	6.0	4.500	27.000	
3.33	ինֆորմ	Կար N3- նյութածախսը	մ	12.5	8.500	106.250	
3.34	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսում 1 շերտով, 0.2մմ հաստ. N3 կարերի թևիկներին b=45սմ	մ ²	1.5	1.500	2.250	
3.35	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը N3 կարերի համար, նյութերի արժեքը և մատակարարումը	մ ²	1.5	1.500	2.250	
		<u>Կար N4-30մ</u>				0.000	
3.36	6-1, կիրառելի	Դ-տիպի գոյություն ունեցող բլոկների շինարարական կարերի լցում պոլիմեր-ցեմենտ շաղախով ֆիբրային մազիկներով (30)	մ ³	0.60	90.000	54.000	
3.37	6-343	Ցեմենտ-պոլիմեր շաղախի (1:2 ցեմենտ-ավազ հարաբերությամբ) պատրաստում շինհրապարակում	մ ³	0.6	50.000	30.000	
3.38	ինֆորմ	Ավազ, արժեք և մատակարարումը	մ ³	0.6	6.000	3.528	
3.39	ինֆորմ	Ցեմենտ Մ400, արժեք և մատակարարումը	տ	0.3	60.000	18.720	
3.40	ինֆորմ	ջուր, արժեք և մատակարարումը	մ ³	0.2	0.500	0.105	
3.41	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ, արժեք մատակարարում	տ	0.031	1800.000	56.160	
3.42	"Արգել" ՓԲԸ	Բազալտե մազիկներ 5մմ, արժեք մատակարարում	տ	0.006	1000.000	6.240	
3.43	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսում 1 շերտով, 0.2մմ հաստ. կարերի թևիկներին b=45սմ	մ ²	13.5	1.500	20.250	
3.44	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը	մ ²	13.5	4.500	60.750	
3.45	41-48 կիրառելի	Գոյություն ունեցող Դ-տիպի բլոկների դեֆորմացիոն կարերի վերականգնում (Կար N5)	մ	12.5	11.000	137.500	
3.46	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի քսում 1 շերտով, 0.2մմ հաստ. կարերի թևիկներին b=45սմ, (Կար N5)	մ ²	5.6	1.500	8.438	
3.47	<<ՅԻԴՐԱՏՆԹ>> > ՍՊԸ	Յիդրա ՏՆԹ Բոնդ նյութի ծախսը (Կար N5)	մ ²	5.6	4.500	25.313	

		Ընդամենը՝ ըստ բետոնային աշխատանքերի				9646.834	7.171
		<i>Մեկուսիչ աշխատանքներ</i>					
3.48	27-Aug	Դ- տիպի ե/բ բլոկների արտաքին մակերևույթի քսուկային ջրամեկուսացում բիտումով, երկշերտ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ ²	130	1.400	182.000	
		Ընդամենը՝ ըստ մեկուսիչ աշխատանքերի				182.000	0.128
		Ընդամենը՝ ըստ բաժին 3-ի				11398.937	8.468
		4. Արտաշատի մայր ջրանցք Պ4297+67- Պ4298+02					
		<i>Յողային աշխատանքներ</i>					
4.1	1-231	Ջրանցքի մաքրում բերվածքներից բուլդոզերով, շերտի եզրին ռետինե խցափակիչով, տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտի կից (ջրանցքի հատակի b=8.3մ)	մ ³	26.3	2.500	65.625	
4.2	1-168	Բուլդոզերով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	26.3	1.500	39.375	
4.3	1-959	Ջրանցքի մաքրում բերվածքներից ձեռքով տեղափոխումով 10մ կուտակումով էքսկավատորի շերտի կից (հատակի եզրերով 10սմ լայնքով)	մ ³	1.1	3.500	3.675	
4.4	1-168	Ձեռքով մաքրված և կուտակված բերվածքների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	1.1	1.500	1.575	
4.5	1-990 կիրառելի	Խոռոչների դեստրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	1.4	6.000	8.400	
4.6	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	1.4	1.500	2.100	
4.7	37-719, k=0.6	Գոյություն ունեցող Դ-25 տիպի հավաքովի երկաթբետոնե բլոկների ապամոնտաժ	մ ³	17.6	8.000	140.800	
4.8	сметные цены на погрузочные работы п29	Ապամոնտաժված բլոկների թափոնների բարձում ինքնաթափ	տ	44.0	1.000	44.000	
4.9	46-83	Հատակի և նախապատրաստական շերտի բետոնի քանդում կուտակումով	մ ³	8.5	6.000	51.060	
4.10	1-990 կիրառելի	Դ-բլոկների շինարարական կարերի, դեստրուկտիվ բետոնի քանդում հետահար մուրճով կուտակումով	մ ³	0.3	8.000	2.400	
4.11	1-171	Բետոնի թափոնների դուրս բերում ջրանցքից էքսկավատորով 0.65մ ³ բարձումով	մ ³	8.8	1.500	13.215	
4.12	միջինացված շուկայական գինը 1տ/կմ համար 80 դրամ	Բարձրված բերվածքների և բետոնի թափոնների ինքնաթափերով տեղափոխում 10կմ	տ	108.9	3.300	359.515	
4.13	1-962	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով	մ ³	56.0	3.900	218.400	
4.14	1-969	Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի բնահողերից տոփանումով	մ ³	56.0	3.800	212.800	
4.15	47-95, 47-98	Ճանապարհի պրոֆիլավորում 4.0մ լայնությամբ	մ	35.0	0.500	17.500	
		Ընդամենը՝ ըստ հողային աշխատանքների				1180.440	0.885
		<i>Բետոնային աշխատանքներ</i>					
4.16	13-263	Գոյություն ունեցող բետոնի մակերևույթի մաքրում մետաղական խոզանակով	մ ²	182.00	1.000	182.000	
4.17	6-1	Խոռոչների փակում հատակում միաձույլ B15, F150, W6 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ ³	1.40	78.000	109.200	
4.18	6-1	Ենթաշերտ միաձույլ B7.5, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ ³	4.13	65.000	268.450	
4.19	PEP-88 12-2, K=0.3, կիրառելի	Դ-25 տիպի գոյություն ունեցող՝ ե/բ հավաքովի բլոկների և հատակի քայքայված դեֆորմացիոն կարերի մաքրում (թափոն 14.2մ ³ , 3.81մ ³)	մ	30.80	1.000	30.800	

4.20	37-719	Բ-25.20-1 տիպի բլոկների մոնտաժ, ամրանի ծախսը 116.0կգ/մ ³ , ներառյալ N2 և N3 կարերի ստեղծումը	մ ³	19.8	55.000	1089.000	
4.21	ինՖորմ	Բ-25.20-1 տիպի բլոկներ արժեք և մատակարարում	հատ	18.0	190.000	3420.000	
4.22	37-705	Բ-25.20-1 տիպի բլոկների միջև ե/բետոնե հատակի ստեղծում, B15, F150, W6, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ ³	4.38	78.000	341.640	
4.23	37-727	Ամրանների տեղադրում	տ	0.267	50.000	13.374	
4.24	ինՖորմ	Փ6 AI դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.071	450.000	31.914	
4.25	ինՖորմ	Փ12 AIII դասի ամրան, արժեք և մատակարարում	տ	0.197	450.000	88.452	
